

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ընդունված է
19 նոյեմբերի 2014 թ.

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 16.1-ին հոդվածի 3-րդ մասից հանել «և նվազագույն հարկերը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 1-ին, 5-րդ և 6-րդ մասերից «կամ առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու» և «կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների» բառերը հանել.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի կիրառման իմաստով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում կատարված գործարքը կամ գործողությունը համարվում է խախտման հիմք, եթե հարկային մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում արձանագրվել է, որ գործարքը կամ գործողությունը կատարվում է առանց սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող «Հավելված 4»-ով սահմանված վավերապայմանները բավարարող ուղեկցող փաստաթղթերի:»:

3) վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անփաստաթուղթ ապրանքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքը՝

1) ձեռք բերող հարկ վճարողի նկատմամբ չի կիրառվում, եթե օրենքով սահմանված կարգով խախտումն արձանագրվելու ժամանակ հիմնավորվում է ապրանքն այլ հարկ վճարողից ձեռք բերվելու և այդ հարկ վճարողի կողմից ուղեկցող փաստաթուղթ չտրամադրվելու հանգամանքը: Սույն կետում նշված դեպքերում տուգանքը կիրառվում է անփաստաթուղթ ապրանք վաճառող հարկ վճարողի նկատմամբ.

2) ձեռք բերող հարկ վճարողի և ապրանքն առաքող կամ տեղափոխող հարկ վճարողի նկատմամբ չի կիրառվում, եթե կապի կամ հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խախտման պատճառով՝

ա. 2015 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում հնարավոր չի եղել դուրս գրել հարկային հաշիվ համարվող ուղեկցող փաստաթուղթ (հարկային հաշիվ համարվող ուղեկցող փաստաթուղթ դուրս գրելու պարտավորության դեպքում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով դուրս գրված այլ ուղեկցող փաստաթղթի առկայության պարագայում,

բ. 2016 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում հնարավոր չի եղել դուրս գրել այլ հաշվարկային փաստաթուղթ համարվող ուղեկցող փաստաթուղթ (այլ հաշվարկային փաստաթուղթ համարվող ուղեկցող փաստաթուղթ դուրս գրելու պարտավորության դեպքում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով դուրս գրված այլ ուղեկցող փաստաթղթի առկայության պարագայում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է՝

1) կապի խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը կապ տրամադրող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին տրամադրելու և այդ տեղեկատվությունը լիազոր մարմնի կողմից հարկային մարմնին տրամադրելու կարգը.

2) հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմնի կողմից հրապարակելու կարգը.

3) կապի կամ հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքերում այլ ուղեկցող փաստաթղթերի և կապի խափանումը վերացնելուց հետո նախկինում դուրս չգրված ուղեկցող փաստաթղթերի դուրսգրման կարգը:»:

Հոդված 4. Օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «, ինչպես նաև օրենքով սահմանված՝ հարկի նվազագույն չափի» բառերը:

Հոդված 5. Օրենքի 1-ին հավելվածում՝

1) 1.4-րդ կետի «է» ենթակետից հանել «և նվազագույն շահութահարկի կամ եկամտային հարկի» բառերը.

2) 2.1-ին կետի տասնհինգերորդ պարբերությունից հանել «, նվազագույն գումարների» բառերը:

Հոդված 6. Օրենքի 4-րդ հավելվածում՝

1) վերնագրից հանել «և գրանցման (հաշվառման)» բառերը.

2) 1-ին կետից հանել «և ուղեկցող փաստաթղթերի գրանցման (հաշվառման)» բառերը և վերջին նախադասությունը.

3) 4-րդ կետի 8-րդ ենթակետը, 6-16-րդ կետերը և ձևը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, 3-րդ հոդվածի 3-րդ կետի, 4-րդ և 5-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

13 դեկտեմբերի 2014 թ.
Երևան
ՀՕ-185-Ն